ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 6-ին, կիրակի. - Ե կիր.: Տօն Երեւման Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամենահաղթ զորությունը Խաչիդ, Քրիստոս, տրվեց իբրև օգնություն թշնամու դեմ, քո զորությամբ պատերազմելու համար» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 13):

Մայիսի 13-ին, կիրակի. - Զ կիր.:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եվ մենք բոլորս բաց երեսով տեսնելով Տիրոջ փառքը ինչպես հայելու մեջ, նույն պատկերով ենք նորոգվում փառքից փառք, որպես թե Տիրոջ Հոգով» (Բ Կորնթ. Գ 18) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 19):

Մայիսի 17-ին, հինգշաբթի. – Խ օր Ցինանց: Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբեղա Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Մայիսի 20-ին, կիրակի. - Է կիր.: Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Մայիսի 27-ին, կիրակի. - Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց: